ՆԶՊ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Դասընթացավար՝ Մկրտիչ Գայրանյան
Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 4 հիմն. դպրոցի ուսուցիչ

Թեմա՝ Արտակարգ իրավիճակներ եվ բնակչության պաշտպանությունը

8-րդ դասարան

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Նպատակ.

- **Զարգացնել արտակարգ իրավիճակներն ու դրանց հնարավոր հետևանքները բնութագրելու և դասակարգելու հմտություն, քննարկել այդ իրավիճակներում բնակչության վարքի կանոնները:**
- **Խթանել արտակարգ իրավիճակներում բնակչության վարքային խնդիրների վեր հանելու և կանոններ մշակելու հմտություն:**
- **Ճգնաժամերի ու պատերազմի ժամանակ զարգացնել քննադատորեն վերլուծելու հակամարտության ու մեդիայի փոխազդեցությունը, տեղեկատվական հոսքերում լավ կողմնորոշվելու կարողությունը:**
- **Ձևավորել համացանցի ապահով և արդյունավետ օգտագործման և արտակարգ իրավիճակների պայմաններում սթափ, առանց խուճապի գործելու հմտություններ:**

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Վերջնարդյունք

Սովորողը կկարողանա՝

- բնութագրի ու դասակարգի տարբեր տիպի արտակարգ իրավիճակները և դրանց հնարավոր հետևանքները, քննարկել այդ իրավիճակներում բնակչության վարքի կանոնները:
- պարզաբանի մեդիայի ժամանակակից ընկալումն ու դերը, ներկայացնի ու գնահատի մեդիագրագիտության դերը հատկապես ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ,
- իրականացնի անհրաժեշտ տեղեկության արդյունավետ որոնում համացանցում, վերլուծի ու քննարկի տեղեկությունը, տարբերակի վնասակար և ոչ պատշաճ բովանդակության տեղեկությունը,
- կարժևորի համացանցի հնարավոր ռիսկերից պաշտպանվելու անհրաժեշտությունը և իրազեկի համայնքին

Դասի ընթացքը

- **Քայլ 1. Խթանում/ Մուտքի տոմս**

Ուսուցիչը ցույց է տալիս որևէ նկար կամ տեսանյութ և պատասխանելու հարցերին և քննարկում պատասխանները

- Ի՞նչ եմ տեսնում

- Ի՞նչ եմ կարծում

- **Քայլ 2. Բացատրում**

Ուսուցիչը ներկայացնում է Ինչ է մեդիագրագիտությունը և նրա դերը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Մեդիան հաղորդակցության ուղիների ու գործիքների այն միջավայրն է, որտեղ ստեղծվում ու տարածվում են տեղեկություններ, ուղերձներ, տվյալներ: Այն տեղեկատվությունը հասցնելու ամենաարագ և արդյունավետ միջոցն է: Մեդիագրագիտության նպատակն է մեդիասպառողին օգնել հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը, շարժառիթները և ուղղվածությունը, քարոզչությունը տարբերել օբյեկտիվ տեղեկատվությունից, խուսափել մեդիայի բացասական ազդեցությունից:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը անհատին հնարավորություն է ընձեռում.

- ունենալ տեղեկատվության մատչելիություն,
- քննադատաբար վերլուծել մեդիա բովանդակությունը,
- ստեղծել մեդիա արտադրանք,
- գործել մեդիայի հետ միասին:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Պատերազմներից առաջ մինչ ակտիվ ռազմական գործողություններ սկսելը միմյանց դեմ են դուրս գալիս թշնամացած երկրների մեդիաները:

Այդ պայքարում արյուն չկա, բայց հենց մեդիան է լիցենզավորում հազարավոր մարդկանց սպանություններ, խոշտանգումներ, շանտաժ, արդարացնում և հիմնավորում են սպասվող կոտորածներն ու բռնություններ, տարածում ապատեղեկատվություն, խուճապ, ստեղծելով ատելություն ու վախի մթնոլորտ:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Ատելությունն այն զգացմունքն է, որը սովորաբար նախորդում է թշնամանքին: Ինչպես ընդհանուր թշնամին է միավորում մարդկանց տարբեր խմբերի, այնպես էլ՝ ընդհանուր ատելությունը: Ատելության քարոզը պատերազմների մշտական ուղեկիցն է: Պատերազմի դաշտում առաջին զոհը ճշմարտությունն է:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Ապատեղեկատվությունը, մանիպուլյացիան ճանաչելու, տարբերելու և դրանից խուսափելու համար կարևոր է չտրվել զգացմունքներին ու պահպանել մեդիագրագիտության կանոնները: Ապատեղեկատվությունը, հատկապես ճգնաժամային և պատերազմական իրավիճակում, շատ ազդեցիկ ու զգացմունքային է լինում՝ վախեցնող, սպառնացող, հուսադրող, հուզիչ…

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Առանց հույզերի, սթափ վերլուծելով ցանկացած կասկածելի տեղեկատվություն՝ անհրաժեշտ է մտքում ունենալ մեդիագրագիտության հինգ հարցերը, որոնք օգնում են վերլուծել բովանդակությունը.

Մեդիագրագիտության հինգ հարցերը.

1. Ո՞վ է հեղինակը:

2. Ո՞րն է ասելիքը:

3. Ո՞ւմ է ուղղված ասելիքը:

4. Ի՞նչ հնարքներ են օգտագործված:

5. Ի՞նչ նպատակ ունի նյութը

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Նյութը կարդալուց հետո ընթերցողին պիտի պարզ լինի, թե ինչը, որտեղ եւ երբ է կատարվել, որն է սկզբնաղբյուրը, որոնք են շահագրգիռ կողմերը եւ այլն: Լսարանի հանդեպ պատասխանատվությունն է ձեւավորում լրատվամիջոցի հանդեպ վստահությունը: Կասկածի՛ր, երբ վերնագիրը սենսացիոն է, պատկերները՝ էմոցիոնալ:Երբ նյութերը պարունակում են «շտապ», «հույժ գաղտնի», «մեծ սկանդալ» եւ նման այլ վերնագրային պիտակներ, հոգեցունց նկարներ, ուրեմն իրավունք ունենք կասկածելու դրանց անաչառությանը:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Սոցիալական ցանցերում շփումների ժամանակ մի քննարկեք և ոչ ոքի մի փոխանցեք տեղեկություններ ՀՀ Զինված ուժերի ստորաբաժանումների քանակի, սպառազինության, զորքերի տեղաշարժի , զինծառայողների կամ նրանց հարազատների անձնական տվյալներ, ստրատեգիական նշանակության օբյեկտների մասին տվյալներ:

ՀԻՇԵՔ, որ սոցիալական ցանցերում գեղեցկադեմ դեռահասի նկարով ձեր զրուցակիցը իրականում հնարավոր է, որ թշնամի երկրի հատուկ ծառայության սպա լինի, որը կարող է շատ կարևոր տեղեկություն կորզել ձեզանից կամ վտանգավոր ապատեղեկատվություն տարածել ձեր միջոցով:

Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

Զգուշացի՛ր վախեցնող, սարսափեցնող լրահոսից: Եթե մեդիան ուզում է, որ ազդվես, այլայլվես, վախենաս, ուրեմն չի վստահում քո դատելու ու վերլուծելու կարողություններին: Մտքում ասա՝ ես ինքս կորոշեմ, թե ինչ անել ստացած ինֆորմացիայի հետ, իսկ դուք ինձ տրամադրեք այն ամբողջությամբ ու հնարավոր ճշտությամբ:



Մեդիագրագիտությունը ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ

- **Քայլ. 3. Իմաստի ընկալում/ Գործնական աշխատանք**

Խմբերի բաժանում և իրազեկող պաստառների ստեղծում

- Ճգնաժամերի ու հակամարտությունների ժամանակ հետևեք միայն փորձված, վստահելի աղբյուրների:
- Տարբերեք քարոզչությունը տեղեկատվությունից: Ստուգեք կասկածելի տեղեկությունները:Ստացված տեղեկատվությունը «ֆիլտրեք» մեդիագրագիտության հինգ հարցերի միջոցով:
- Ճանաչեք հակառակորդի կողմից տարածվող տեղեկությունը և մի տարածեք դրանք: Հետևեք միայն պաշտոնական լրահոսին:
- Սոցիալական ցանցերում շփումների ժամանակ մի քննարկեք և ոչ ոքի մի փոխանցեք տեղեկություններ ՀՀ Զինված ուժերի ստորաբաժանումների քանակի, սպառազինության, զորքերի տեղաշարժի , զինծառայողների կամ նրանց հարազատների անձնական տվյալներ, ստրատեգիական նշանակության օբյեկտների մասին տվյալներ:
- Սոցիալական ցանցերում գեղեցկադեմ դեռահասի նկարով ձեր զրուցակիցը իրականում կարող է լիներ թշնամի երկրի հատուկ ծառայության սպա, որը կարող է շատ կարևոր տեղեկություն կորզել ձեզանից կամ վտանգավոր ապատեղեկատվություն տարածել ձեր միջոցով:

Քայլ 4. Ամփոփում և անդրադարձ

- Պաստառների քննարկում և ամփոփում

- **Տնային հանձնարարություն**
  Օգտագործե՛ք մեդիագրագիտության 5 հարցերը 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում հայկական մեդիայում տեղեկատվական տեքստերից ընտրել մեկը և վերլուծել:

Օգտագործված գրականություն

- «Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ», Ձեռնարկ դասավանդողների համար, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2023
- «Մեդիա և տեղեկատվական գրագիտության ուսուցում», Մեդիայի զարգացման հիմնադրամ, 2019
- «Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց» ՀՀ ԱԳՆ, ՀՀ-ում ՅՈՒՆԵՍԿՕ-Ի Ազգային հանձնաժողով,
- Մեդիագրագիտության ուսումնական նյութեր, Դոյչե Վելե ակադեմիա, 2018
- Медиаобразование: полемический взгляд / Разлогов К. Э., А. В. Шариков и др.. — Сборник статей. — М.: МОО ВПП ЮНЕСКО «Информация для всех», 2006
- Фёдоров А. В. Медиаобразование // Большая российская энциклопедия. Т. 17. М.: Большая российская энциклопедия, 2012.

Լինենք մեդիագրագետ, որ մեր գլխին չբերենք աղետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: